«ՊԱՏԱՀԵԱԼՔ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՏԱՌԻՍ» ԴԱՐՁՎԱԾՔԸ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ 1184 Թ. ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Գ. Վ. ԱԲԳԱՐՅԱՆ

Հայկական ձեռագրերի հիշատակարաններում հանդիպում է լեզվական բանաձևի (ֆորմուլայի) կայունություն ստացած մի անփոփոխ դարձվածք՝ «հանդիպեալք (կամ՝ «պատահեալք») ընթերցմամբ տառիս», որ նշանակում է՝ «ովքեր որ ընթերցմամբ (ընթերցելիս, ընթերցելով, ընթերցանությամբ) կը-հանդիպեն այս ձեռագրին»։ Բերենք մի քանի օրինակ Լ. Ս. Խաչիկյանի կազմած՝ Ժե դարի հիշատակարանների ժողովածուից[1]. «Ոք հանդիպի սմայ ընթերցմամբ» (էջ 19), «հանդիպեալք սմայ ընթերցմամբ կամ օրինակելով» (էջ 120), «հանդիպեսցէ սմա տեսութեամբ կամ ընթերցմամբ» (179), «հանդիպեալք այսմ տառի կամ ընթերցսամբ կամ գաղափար առնելով» (187) և այլն։

Քննարկվող դարձվածքը հանդիպում է նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքի հիշատակարանում. «Զամենեսեան զկնի մեր եկեալսդ, զհարս և զեղբարս, ի զանազան ժամանակս, աղաչեմ մաղթանաւք զյոլով և զոչ սակաւ սխալանս ուղղեսջիք՝ պատահեալք ընթերցմամբ տառիս և զիրաւացի թերին լցջիք»[2]։

Դատաստանագրքի հետագա ընդօրինակություններից մեկում ընթերցմամբ բառի վերջին Բ տառն անուշադրաբար արտագրվել է առանձին, որպես Ռ (=2) թվանշան և այդպիսով «ընթերցմամբ տառիս»-ը դարձել է «ընթերցման Ռ (=2) տառիս», որի համաձայն ստացվել է այնպես, որ Մխիթար Գոշը իր Դատաստանագիրքը կոչել է երկու գիրք («Բ տառ»)։ Այս անհեթեթ վրիպակն այնքան ակնհայտ է, որ Դատաստանագրքի հրատարակողներից և ուսումնասիրողներից ոչ մեկը կարևորություն չի տվել նրան։ Ավելին. Դատաստանագրքի ռուսերեն թարգմանության մեջ վրիպակի փոխարեն թարգմանված է արտահայտության ճիշտ ձևը[3], իսկ վրիպակի մասին անգամ նշում չի արված։

Վրիպակը խիստ բացահայտ լինելով, տարածում չի գտել և առկա է միայն աղավաղված բնագիրը պարունակող ձեռագրում (Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 488) և նրանից ծագող չորս ձեռագրերում (ձեռ. № 486, 2635. 6496 և Վիեննայի ձեռ. № 581)։ Նույնիսկ այս ձեռագրերից երկուսի մեջ վրիպակը հետագայում այս կամ այն ձևով ուղղվել կամ հերքվել է։ Այսպես, օրինակ. Վիեննայի ձեռագրի գրիչն իր սեփական հիշատակարանում գրում է «պատահողք այսմ տառի (և ոչ՝ «Բ տառի»)[4], իսկ մեր Մատենադարանի № 6496 ձե-

---

1 «ԺԴ դարի հայկական ձեռագրերի հիշատակարաններ». կազմեց Լ. Ս. Խաչիկյան. Երևան, 1950։

2 Զմմառի ձեռագիր, № 226, էջ 46բ։

3 «Армянский Судебник Мхитара Гоша», пер. с древнеармянского А. А. Паповяна. Երևան, 1954, էջ 29։

4 «Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանի ի Վիեննա». կազմեց Հ. Հ. Ոսկեան, Վիեննա, 1963, էջ 32։

ռագրի գրիչ Գրիգորը անհնարին է համարել, թե Գոշը կարող էր իր մի գիրքը կոչել երկու գիրք («երկու տառ»), ուստի և «Բ տառիս» արտահայտությունն ընկալել է պարզապես որպես «երկու խոսք», «մի երկու բան» արտահայտություններին համազոր արտահայտություն և ինքն էլ իր ընդօրինակած բոլոր գործերը համեստաբար կոչել է «երկու տառ». շուրջ քսան տարբեր գործեր արտագրելուց հետո նա գրել է. «Գծագրեցի զայս երկու տառս»[5]։

Միջնադարյան գրիչների կողմից նկատված ու մերժված վրիպակը, սակայն, մեր օրերում լույս տեսած մի հոդվածում աննկատ է մնացել և տեղի է տվել թյուրիմացության։ Վկայակոչելով վրիպակը, հոդվածագիրը գրում է. «Հիշատակարանը գրելու ժամանակ Դատաստանագիրքը կազմված էր, ինչպես շատ պարզ ասում է Մխիթարը, երկու գրքից»[6]։ Հոդվածի հեղինակը՝ Խոսրով Թորոսյանը ոչ միայն չի նկատել վրիպակը, այլև՝ ճիշտ չի ընկալել «տառ» բառի իմաստը, այդ պատճառով էլ նա երկու գիրքը նույնացրել է մի գրքի երկու մասերի հետ, գրելով. «Դատաստանագիրքը կազմված էր... երկու գրքից, կամ որ միևնույնն է՝ երկու մասից»։ Ինչպես տեսնում ենք, հոդվածագրին հայտնի չի եղել, որ «տառ» բառը ամբողջության և ոչ թե մասերի նշանակություն ունի։ Մխիթար Գոշն ինքը ամենուրեք Դատաստանագիրքը դիտում է որպես մեկ ամբողջական միավոր. «եղև պատճառ գրելոյ զսա», «զպակասն ի սմանէ», «գիրս Դատաստանի զնմանութիւն կանոնաց ունի», «մտացածին բանիւք գրեմ զսա» և այլն։ Մեր Մատենադարանի № 485, 657 և այլ ձեռագրերում պահպանվել է Մխիթար Գոշի հիշատակարանի համառոտագրություններ, որտեղ կարդում ենք. «Եւ արդ թէպէտ և համարձակեցաք մեք և գրեցաք զգիրս, սակայն եթէ հանդիպեցի ոք իմաստուն և թիւրութիւն գտցե ի սմա՝ աղաչեմ զի լցցէ զպակասն»[7]։ Այստեղ համառոտագրված է Գոշի հիշատակարանի այն հատվածը, որտեղ գտնվում է «ընթերցմամբ տառիս» արտահայտությունը։ Համառոտագրությունից պարզ երևում է, որ համառոտագրողի ձեռքին գտնված ձեռագրում նույնպես եղել է «ընթերցմամբ» (և ոչ «ընթերցման Բ») տառիս», ուստի և նա Դատաստանագիրքը կոչել է զգիրս և ոչ «Բ տառ»։

Ահա այս փաստերից ելնելով է, որ մենք մի հոդվածով[8] ընթերցողի ուշադրությանը ներկայացրինք Դատաստանագրքի՝ Մատենադարանում և արտաքսման զանազան ձեռագրատներում պահվող համապատասխան ձեռագրերի պատկերը և նրանց հիման վրա հանգամանորեն ցույց տվինք, որ Խոսրով Թորոսյանի համար հիմք ծառայած «Բ տառիս» արտահայտությունը, որը նա դիտում է որպես Դատաստանագրքի երկու գրքից բաղկացած լինելու ապացույց և որպես Դատաստանագրքի հորինման ավարտական ժամանակը (1184) որոշող ամենակարևոր փաստերից մեկը, պարզապես չընկալված գրչական վրիպակ է։

Մենք չենք կասկածում, որ եթե Թորոսյանին վաղօրոք հայտնի լիներ մեր ներկայացրած փաստերը և եթե նա ծանոթ լիներ Մխիթար Գոշի հիշատակարանի ավելի հին ընդօրինակություններին, որտեղ «ընթերցման Բ տա-

5 Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 6496, էջ 423բ։

6 Խոսրով Թորոսյան, Երկու խմբագրություն Մխիթար Գոշի Դատաստանագրքի, «Բանբեր Մատենադարանի», № 6, Երևան, 1962, էջ 62։

7 Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 485, էջ 20բ։

8 Գ. Վ. Արզարյան, Մի ուղղում Մխիթար Գոշի Դատաստանագրքի աղճատված ընթերցում, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1964, № 1, էջ 77—80։

ռիս» վրիպակի փոխարեն պահպանվել է «ընթերցմամբ տառիս» ճիշտ ձևը, թյուրիմացությունը կանխված կլիներ։ Սակայն պատասխան հոդվածում նա գրում է. «Հոդվածագիրը (այսինքն Գ. Աբգարյանը—Գ. Ա.) կարծում է, թե ընթերցման երկու տառիս արտահայտությունը աղավաղված է։ Նա նախ փորձում է ապացուցել, որ հեղինակային օրինակում եղել է ընթերցմամբ տառիս»[9]:

Ստիպված ենք ենթադրելու, որ Թորոսյանը չի նկատել մեր հոդվածում (էջ 80) բերված այն փաստը, որ Դատաստանագրքի ամենահնագույն ձեռագիրը, որը հենց իր բառերով ասած, հանդիսանում է «Մխիթարի գրչի տակից դուրս եկած ոնմիջական օրինակից արտագրված օրինակ»[10], «ընթերցման Ը տառիս» վրիպակի փոխարեն ունի «ընթերցմամբ տառիս»։ Ջմմառի ձեռագրի միկրոֆիլմն այժմ պահվում է մեր Մատենադարանում, և Թորոսյանը ճշմարտությունն իմանալու համար կարող է դիմել այդ ձեռագրին և նրա 46բ էջում կարդալ «պատահեալք ընթերցմամբ տառիս»։

Թորոսյանն այնքան վստահ է իր տրամաբանության և բանասիրական հմտության մեջ, որ սեփական եզրակացությունները համարում է ընթերցողի համար պարտադիր թե՛ բանասիրորեն և թե՛ տրամաբանորեն։ Նա գրում է. «Եզրակացությունը պարտադիր է թե՛ բանասիրորեն և թե՛ տրամաբանորեն։ Ընթերցման (կամ ընթերցմամբ) տառիս-ը դարձել է ընթերցման Բ տառիս միայն և միայն այն բանից հետո, երբ Դատաստանագիրքը բաժանվել է երկու մասի»[11]։ Այս պարտադրող պարբերության մեջ Թորոսյանն իր համար աննկատելի կերպով հաստատել է մեր տեսակետը։ Եթե նա պարբերությունից առաջ մեզ դատապարտում էր այն բանում, որ մենք «փորձում ենք ապացուցել», որ հեղինակային օրինակում եղել է «ընթերցմամբ տառիս», ապա պարտադրող պարբերության մեջ ինքն իր բերանով ասում է. «Ընթերցման (կամ ընթերցմամբ) տառիս-ը դարձել է ընթերցման Բ տառիս»: Ուրեմն հեղինակային օրինակում եղել է «ընթերցմամբ տառիս», ապա նոր դարձել է «ընթերցման Ը տառիս»։ Մենք էլ հենց այդ ենք ասում և զարմանում ենք, որ հոդվածի հեղինակը սկզբից ևեթ չի ընդունել իր սխալը և պատասխանելու ցանկությամբ համակված՝ զուր տեղն ընկել է հակասությունների մեջ։ Եթե մաս առ մաս վերլուծենք Թորոսյանի տարբեր հոդվածներում այդ կապակցությամբ ասածները՝ ստիպված պետք է հանգենք այն կարծիքին, որ «Թորոսյանի գրած հոդվածները միևնույն հեղինակին չպետք է համարենք, որովհետև մի հոդվածում եղած պրնդումները ժխտվում են մյուսում»[12]։

Պատասխան հոդվածում նկատելով, որ «ընթերցման Ը տառիս» ընթերցումն ունեն միայն և միայն այն ձեռագրերը, որոնցում Դատաստանագիրքը բաժանված է երկու մասի»[13], Թորոսյանը կարծել է, թե եթե վրիպակն առկա է ձեռագրերի ինչ-որ մի որոշակի խմբում՝ դրանով վրիպակը դադարում է վրիպակ լինելուց։ Մինչդեռ նրան պետք է հայտնի լիներ, որ վրիպակները երբեք «մտածված-գիտակցված աշխատանքի արդյունք» չեն լինում (նա գրում է. «Այն,

---

9 Խ. Ա. Թ ո ր ո ս յ ա ն, Մխիթար Գոշի Դատաստանագրքի հետ կապված մի քանի հարցերի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 4, էջ 154։

10 Նույն տեղում, էջ 164։

11 Նույն տեղում, էջ 154։

12 Է. Ա. Պ ի վ ա զ յ ա ն, Մխիթար Գոշի Դատաստանագրքի խմբագրությունների մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, էջ 205։

13 Խ. Թ ո ր ո ս յ ա ն, նշվ. հոդվ., «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 4, էջ 154։

ինչ Գ. Արզարյանը համարում է աղճատմունք, անուշադրության հետևանք՝ մտածված-գիտակցված աշխատանքի արդյունք է»[14]. այլ առաջանում են սխալ արտագրության ժամանակ, պատահաբար։ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» բոլոր ձեռագրերում Փավստոս անվան տիոխարեն գրված է Փախըստեայ, բայց սա հիմք տալի՞ս է մտածելու, թե այդ վրիպակի մեջ ինչ որ դիտավորություն կա և թե Փաւվստոսի անունը եղել է Փախստոս։ Դեռ չի գտնված մի ձեռագիր, որտեղ Դիոնիսիոս Արիոպագացու անունը աղավաղված չլինի Արիսպագացի ձևով, բայց մի՞թե որևէ մասնագետ կարող է վրիպակի հիման վրա պնդել, թե ճիշտը «Արիսպագացին» է։ Այդպես էլ «Բ տառիս» վրիպակն է։ Եթե նույնիսկ Դատաստանագիրքը պարունակող բոլոր ձեռագրերը (և ոչ միայն Թորոսյանի նշածները) պարունակեին վրիպակը՝ դարձյալ դրանից չէր կարելի եզրակացնել, թե «ընթերցման Բ տառիս» արտահայտությունը ճիշտ արտահայտություն է։

«Լինդուններ մի վայրկյան,— գրում է Թորոսյանը,— որ ընթերցմամբ տառիս-ը դարձել է ընթերցման Բ տառիս անուշադրարար, բայց մի՞թե գրչական այդ վրիպակը տեղի ունենալուց հետո հրաշք կատարվեց և Դատաստանագիրքն ինքն իրեն, մեխանիկորեն բաժանվեց երկու մասի»[15]։ Բացատրենք։ Դատաստանագիրքը երկու մասի է բաժանվել ոչ թե հրաշքով, ինքն իրեն, այլ՝ Թորոսյանի ձեռքով և հրաշք կատարողն էլ Թորոսյանն է, որը Դատաստանագիրքը բաժանել է երկու մասի, որպեսզի դրանով արդարացնի «երկու տառիս» վրիպակը։ Իսկ Մխիթար Գոշն անձամբ, ինչպես ստորև կտեսնենք, այդ երկու մասերի մասին գաղափար չի ունեցել, ուստի և չէր կարող Դատաստանագիրքը կոչել «երկու տառ»։ Բացի այդ, Մխիթար Գոշը շատ լավ գիտեր «տառ» բառի նշանակությունը, և եթե նույնիսկ ինքն էլ իր գիրքը դիտած լիներ որպես երկու մասից բաղկացած մի գիրք, դարձյալ չէր գրի «Բ տառ», որովհետև «Բ տառ» կնշանակի միայն և միայն երկու առանձին գրքեր և ոչ թե մեկ գրքի ներքին մասեր։ Սա ոչ թե միայն Մխիթար Գոշի իմանալու բանն էր, այլ՝ միջնադարյան բոլոր գրագետների և բոլոր շարքային գրիչների։ Մեզ հասել են տասնյակ հազարավոր հիշատակարաններ, որոնց մեջ Թորոսյանը չի կարող գտնել վրիպակից բացի մեկ ուրիշ դեպք, երբ «տառ» բառը «հանդիպելք ընթերցմամբ (կամ ընթերցման) տառիս» կապակցության մեջ գործածված լինի որևէ թվանշանի հետ, ինչպես որ է «ընթերցման Բ տառիս» վրիպակի մեջ։

Այնպես որ «պատահելք ընթերցմամբ տառիս» արտահայտությունը մեր լեզվում ստեղծվել է Դատաստանագրքից անկախ, նրանից շատ առաջ և մտել գրաբարի բառային կազմի մեջ որպես անփոփոխ մի դարձվածք։ Ուստի Դատաստանագրքի հիշատակարանում հանդիպելով այդ արտահայտության աղավաղված մի ձևի, պետք էր պարզապես նկատել, որ դա վրիպակ է, բայց քանի որ Թորոսյանին հայտնի չի եղել արտահայտության ուղիղ ձևը, այդ պատճառով էլ նա վրիպակն ընդունել է որպես ճշմարտություն և դրանով Մխիթար Գոշին ներկայացրել է որպես ընդհանուր կանոնից շեղվող մի տարօրինակ աղավաղման հեղինակի։

Դառնալով Դատաստանագրքին՝ Մխիթար Գոշն այն բաժանել է երեք մասերի. «Առաջինն՝ նախադրութիւն — գրում է Գոշը,— որ է սկիզբն Գրոց դա-

14 Նույն տեղում.
15 Նույն տեղում.

տաստանի»[16], երկրորդ՝ եկեղեցական կանոններ, երրորդ՝ աշխարհիկ օրենքներ։

Դժվար է ասել, թե այս երեք մասերից ո՞րն է Մխիթար Գոշն ինքն ավելի առաջնակարգ համարել։ Հայ նշանավոր գիտնական-իրավաբան Վ. Բաստամյանցը, որին հայագիտությունը պարտական է Դատաստանագրքի ինչպես գիտական հրատարակության, այնպես էլ մանրակրկիտ ու բազմակողմանի բնագրագիտական և իրավաբանական ուսումնասիրության համար, գրում է. «Մխիթարի Դատաստանագիրքը բաղկանում է երեք գլխավոր մասներից՝ 1. Նախադրություն, 2. եկեղեցական կանոններ և 3. աշխարհական օրենքներ։ Գիտական կողմից նայելով՝ մեզ համար ամենից ավելի մեծ նշանակություն ունի նախադրությունը... իսկ... եկեղեցական և աշխարհական մասերը ոչ այլ ինչ են, եթե ոչ ժողովածու եկեղեցական և այլ տեսակի կանոնների և իրավաբանական ավանդություններիս»[17]։

Այսպիսով, Դատաստանագիրքը բաղկացած է երեք մասերից, իսկ երկու մասերի բաժանելը Թորոսյանի անձնական մոտեցումն է։ Եվ պատահական չէ, որ նույն Թորոսյանը 1962 թ. Դատաստանագիրքը բաժանում է բոլորովին այլ մոտեցմամբ, 1964-ին՝ այլ (այդ մասին՝ ստորև)։

1964-ին գրած հոդվածում Թորոսյանը վրիպակային «երկու տառ» արտահայտության տակ հասկանալով Դատաստանագրքի միայն երկու մասերը (եկեղեցական և աշխարհական օրենքներ), փաստորեն ընդունում է, որ Մխիթար Գոշն իր ընթերցողին խնդրել է կարդալ Դատաստանագրքի միայն կեսը։ Տասնրմեկ գլուխներից բաղկացած Նախադրությունը, որը պարունակում է Դատաստանագրքի հիմունքները և հանդիսանում է Գոշի երկի ամենաինքնուրույն մասը, դուրս է մնացել հոդվածագրի տեսադաշտից։ Այնինչ՝ իրականում Գոշն իր ընթերցողներին դիմելիս նկատի կունենար ամենից առաջ Նախադրության մեջ սպասվելիք սխալները, որովհետև մյուս մասերի նյութը նա մեծ մասամբ քաղել է ժամանակի հեղինակավոր աղբյուրներից։ Իսկ ավելի անաչառ լինելու համար ասենք, որ Գոշը ոչ մի խտրություն չի դրել Դատաստանագրքի մասերի մեջ, չի էլ մտածել, թե Դատաստանագիրքը քանի մասից է բաղկացած, այլ ուղղակի կրկնելով միջնադարյան բոլոր հիշատակագիրների սովորությունը՝ սերունդներին խնդրել է հիշել իր դիրքը և ներել սխալների համար. «սխալանս ուղղեսջիք պատահեալք ընթերցմամբ տառիս»։

Ինչ վերաբերում է Թորոսյանի՝ առաջին հայացքից խիստ տպավորիչ թվացող այն պնդմանը, թե մեր կողմից վրիպակ համարվող «Բ տառիս» արտահայտությունը «մտածված-գիտակցված աշխատանքի արդյունք է», քանի որ հանդիպում է «միայն և միայն այն ձեռագրերում, որոնցում Դատաստանագիրքը բաժանված է երկու մասի»[18], արդեն ասացինք, որ Թորոսյանը սխալ է ընկալել փաստը, որովհետև իրականում «Երկու մասից» բաղկացած (առանց Նախադրության) Դատաստանագիրք գոյություն չունի։

Թորոսյանը պետք է հաշվի առներ, որ եթե անգամ իրականում գոյություն ունենային միայն «երկու մասից» բաղկացած Դատաստանագրքի ձեռագրեր և

16 Մ խ ի թ ա ր Գ ո շ, Դատաստանագիրք, Վաղարշապատ, 1880, էջ 5։
17 Նույն տեղում, էջ 5։
18 «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 4, էջ 154։

վրիպակը հանդիպեր միայն և միայն այդ ձեռագրերի խմբում, դարձյալ չէր կարելի դրանից լուրջ եզրակացության հանգել, քանի որ վրիպակը, բնականաբար, պետք է սկզբում առաջանար ինչ-որ մի ձեռագրում, որը հետագայում արտագրվելով և բազմանալով կազմելու էր առանձին ձեռագրախումբ։ Այդպես է պատահել նաև «Բ տառիս»-ի հետ։ Թորոսյանի մատնանշած ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանց բոլորի մեջ գտնվող Դատաստանագիրքը ծագում է Դատաստանագրքի այնպիսի մի նախնական օրինակից, որի հնագույն մի ընդօրինակություն կարելի է գտնել Մատենադարանի № 488 ձեռագրում։

№ 488 ձեռագրում ընդօրինակված Դատաստանագրքի և միևնույն ծագում ունեցող մյուս օրինակների կապը կարելի է ստուգել Մատենադարանում պահվող № № 486, 2635, 6496 ձեռագրերի միջոցով։ Բացակայում է միայն Վիեննայի ձեռագիրը, այն էլ ստուգել է 85 տարի առաջ Վ. Բաստամյանցը, որը գրում է. «Բաղդատելով իմ օրինակը (իմա № 488— Գ. Ա.) Վիեննայի օրինակի հետ ես զարմացած մնացի սոցա կատարյա՛լ, ոչ միայն բառ առ բառ, այլ գրեթե կետ առ կետ նմանության վրա» (Դատաստանագիրք, էջ 112)։ Նշված ձեռագրերից № 486-ը շնայած նյութերի դասավորությամբ և բովանդակությամբ շեղվում է մյուս ձեռագրերից, բայց այնտեղ ընդօրինակված Դատաստանագիրքը նույնպես ծագում է № 488-ում ընդօրինակվածի նախագաղափար օրինակից։ Այստեղ, սակայն, տեղի է ունեցել նույնքան անհեթեթ մի վրիպակ, որքան «Բ տառիս»-ի դեպքում՝ «Բ տառը» դարձել է «Բ տարի», որի հիման վրա մեկ ուրիշը կարող էր նույնչափ «հիմնավորված» պնդել, թե Մխիթար Գոշը գալիք ընթերցողներին խնդրել է երկու տարի («Բ տարի») անընդհատ կարդալ Դատաստանագիրքը։ Հետաքրքրական է, որ Թորոսյանն ուշադրություն չի դարձրել այս վրիպակի վրա, այնինչ նա պարտավոր էր նախքան «Բ տառը» պաշտպանելը բերել գոյություն ունեցող նաև մյուս վրիպակները («ընթերման սուրը», «ընթերցման տառիս», «ընթարցման Բ տարի»), ապա նոր հիմնավորել, թե ինչու է ինքը նախընտրում դրանցից մեկը։

«Բ տառիս»-ը պարունակող ձեռագրերի կապակցությամբ նշենք մի կարևոր փաստ։ № 2635 ձեռագրի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ ձեռագրի միջոցով կարելի է վերականգնել եկեղեցական և աշխարհիկ հոդվածների բաժանումը ներկայացնող մեզ հասած հնագույն ձեռագրի սկզբնական պատկերը։ Այս ձեռագիրը (№ 488) կորցրել է սկզբի մասը և մեզ է հասել թերի։ № 2635 ձեռագրի ընդօրինակման ժամանակ՝ 1635 թ., սակայն, այն եղել է լրիվ և արտագրվել է № 2635-ի գրչի կողմից։ Այսպիսով № 2635-ը հանդիսանալով № 488-ի իսկական պատճենը պահպանել է նրա նաև կորած մասերի ընդօրինակությունը։

Մեր ընթերցողի ուշադրությունը հրավիրենք հետևյալ փաստի վրա։ Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» աշխատության ձեռագրերում կա մի աղավաղված տեղեկություն (Մարզպան Վասակը նամակ է ստանում Վրաստանից՝ «Թուղթ մի ի Վրաց աշխարհէն»), որն առկա է միայն և միայն այն ձեռագրերում, որտեղ Եղիշեի գիրքը բաժանված է ութ մասի (յեղանակի), իսկ յոթ մասից բաղկացած մի ձեռագիր (Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 1888) և նրան հարող մի քանի ճառընտիրներ պահպանել են Եղիշեի

տեղեկության ճիշտ ձևը (Վասակն ինքն է նամակ գրում Վրաստան՝ «Թուղթ մի ի Վրաց Աշխարհն»)[19]։

Կարելի՞ է արդյոք այդ պատահական զուգադիպության հիման վրա եզրակացնել, թե Եղիշեի տեղեկության աղավաղումը կապված է նրա գրքի ութ կամ յոթ մասերից բաղկացած լինել-չլինելու հետ և որ վրիպակը տեղի է ունեցել այն պատճառով, որ յոթ մասից բաղկացած գիրքը բաժանվել է ութ մասի։

Եթե Թորոսյանին հայտնի լիներ մեր նշած այս՝ և ձեռագրական աշխարհում հանդիպող նմանօրինակ նաև այլ դեպքեր, նա «Բ տառիս» վրիպակը չէր կապի Դատաստանագրքի մասերի հետ և վրիպակը չէր դիտի որպես արդյունք մի «մտածված-դիտակցված աշխատանքի», որը տեղի է ունեցել «միայն և միայն այն բանից հետո, երբ Դատաստանագիրքը բաժանվել է երկու մասի»։

Ի դեպ մեզ հայտնի չէ, թե ինչու Թորոսյանը չի լուսաբանել նաև այն փաստը, որ Դատաստանագիրքը «երկու մասի» բաժանվելուց հետո էլ ձեռագրերի մի խումբ (Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № № 8926, 9655, 795) շարունակել է գերծ մնալ վրիպակից և երկու մասից բաղկացած լինելով հանդերձ, Դատաստանագիրքը կոչել է մեկ տառ։ Այս ձեռագրերում «ընթերցմամբ» բառի վերջին ՄԲ տառերն ընդօրինակող գրչի կողմից ընկալվել են որպես ՍԲ, որի հետևանքով «ընթերցմամբ տառիս»-ը դարձել է «ընթերցման ՍԲ տառիս», որը դարձյալ մատնացույց է անում մեկ (և ոչ թե՝ երկու) տառ։

Ճի՛շտ է, Թորոսյանը փակագծերի մեջ վերցնելով, հայտնել է ոչ այնքան էլ ճիշտ մի տեղեկություն այն մասին, որ «Բ խմբագրության 5 ձեռագիր ունեն «ընթերցման սուրբ տառիս»[20], բայց Մատենադարանի ձեռագրերից հեռու կանգնած ընթերցողը ոչինչ չի կարող հասկանալ առանց որևէ մեկնաբանության բերված այդ տեղեկությունից, մանավանդ Թորոսյանը ընթերցողին նախօրոք զգուշացնում է ուշադրություն չդարձնել դրա վրա։ Նա գրում է. «Ը խմբագրության 5 ձեռագիր ունեն՝ ընթերցման սուրբ տառիս։ Այս ընթերցումը տվյալ դեպքում, բնականաբար, մեզ չի հետաքրքրում»։

Մենք այդպես էլ չենք կարողանում հասկանալ, թե ինչու Թորոսյանին «բնականաբար» չի հետաքրքրել մի փաստ, որն ամբողջովին շրջում է նրա պատկերացումները և ցույց է տալիս, որ «Բ տառիս» վրիպակի պաշտպանության համար մինչև այժմ նրա վկայակոչած միակ հիմքը՝ Դատաստանագրքի կարծեցյալ «երկու մասերից» բաղկացած լինելը, այլևս ոչ մի նշանակություն չունի, որովհետև «երկու մասից» բաղկացած ձեռագրերի կեսն էլ հերքում է այդ հիմքը, շարունակելով Դատաստանագիրքը համարել մեկ տառ («սուրբ տառ»)։ Հիրավի՛, այդ ինչպես է պատահել, որ «հրաշքը» կատարվելուց հետո, այսինքն՝ Դատաստանագրքի «երկու մասերի» բաժանվելուց հետո, ձեռագրերի կեսը զգացել է հրաշքը, կեսը՝ ոչ։

Անցնենք առաջ։ Թորոսյանը գտնում է, որ Մխիթար Գոշն սկզբում կազմել է «մասերի բաժանում չունեցող» Դատաստանագիրքը[21] («Ա խմբագրու-

19 «Եղիշէի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին», աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեան, Երևան, 1957, էջ 132։

20 «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 4, էջ 154։ Այստեղ հայտնված տեղեկություններ հիշյալ ձեռագրերի մասին արդյունք է մեր հոդվածից ապահովորեն ստացած սխալ տպավորության։ Իրականում խոսքով Թորոսյանի նշած ոչ թե հինգ, այլ երեք ձեռագրեր են պարունակում «ընթերցմամբ սուրբ տառիս» արտահայտությունը։

21 «Մասերի բաժանում չունեցող» Դատաստանագիրք մեզ հայտնի չէ։

թյուն»), իսկ ապա՝ «երկու մասի» բաժանված Դատաստանագիրքը («Բ խմբագրություն»)։ Սրանից հետևում է, որ Դատաստանագիրքը «երկու մասի» բաժանողը Մխիթար Գոշն է, հետևաբար և ընթերցմամբ տառիս-ը «մտածված-գիտակցված կերպով» ընթերցման Բ տառիս դարձնողն էլ նա է։ Ուրեմն, ըստ Թորոսյանի, Գոշն սկզբում Դատաստանագիրքը կոչել է մեկ տառ, իսկ հետո՝ երկու տառ։ Սրանով Թորոսյանը չի նկատել, թե ինչպիսի արտառոց գործողություններ է վերագրել հայ մեծ իրավաբանին։ Եթե հետևելով նրա դատողություններին՝ մենք էլ ընդունենք, որ Մխիթար Գոշը միաժամանակ կազմել է երկու տեսակ Դատաստանագիրք, կհայտնվենք գոշագիտության մեջ աննախընթաց մի հեղաշրջման առջև, որովհետև մինչև հիմա որոշ մասնագետներ նույնիսկ կարծել են, թե Դատաստանագիրք կազմելը շատ բարդ բան է (Մխիթար Գոշն ինքն էլ այդ կարծիքն է հայտնել իր գրքում) և ենթադրել են, թե Գոշը Դատաստանագիրքը կազմել է մոտ 30 տարվա ընթացքում[22], իսկ այժմ պետք է ընդունենք, որ նա մեկ տարվա ընթացքում՝ 1184 թ. հորինել է երկու առանձին Դատաստանագիրք։

Թորոսյանը գրում է. «1184 թ. Դատաստանագիրքն ավարտված էր...Բայց այդ թվականին պատրաստ Դատաստանագիրքը ո՞ր խմբագրությունն էր ներկայացնում։ Խմբագրություններից ո՞րն է սկզբնականը»[23]։ Պատասխանն է. «Դատաստանագրքի սկզբնական խմբագրությունը եղել է Ա խմբագրությունը»։ Մի այլ տեղ նա գրում է. «Վկայությունների մի խումբը հաստատում է, որ 1184 թ. Դատաստանագիրքը ավարտվել է»[24]։ Այդ խմբի մեջ նա գետեղում է «երկու տառիս» արտահայտությունը պարունակող հիշատակարանը և հայտնում, որ այդ հիշատակարանը վերաբերում է «Բ խմբագրությանը»[25]։ Այսպիսով, ըստ Թորոսյանի, 1184 թվականին ավարտված էին Դատաստանագրքի և՛ Ա, և՛ Բ խմբագրությունները։

Այս նորագույն տեսակետից բխում է ևս մի արտառոց եզրակացություն, որի համաձայն Մխիթար Գոշը ամբողջ Դատաստանագիրքը փոխել և բոլորովին նոր սկզբունքով մի այլ Դատաստանագիրք է կազմել, բայց ծուլացել է կամ թերացել է գրել նաև մի նոր հիշատակարան, որտեղ անհրաժեշտ կլիներ բացատրել, թե նա ինչու է նոր Դատաստանագիրքը կազմել։

Այնպես է ստացվում, որ նոր հիշատակարան գրելու փոխարեն Գոշը բավարարվել է նրանով, որ Ա խմբագրության համար գրած իր հին հիշատակարանի մեջ ավելացրել է մի տառ («Բ» թվանշանը «ընթերցմամբ տառիս» արտահայտության մեջ) և դրանով սպառել է հարցը, կարծելով, թե այդպիսով հին Դատաստանագրքի հիշատակարանը հարմարեցրեց նորին և ապագա ընթերցողներին էլ հայտնեց, թե «Բ տառիս» արտահայտության մեջ պետք է տեսնել Դատաստանագրքի «Բ խմբագրությունը»։

Բայց չէ՞ որ նույն Թորոսյանը 1962 թ. նույնպիսի վստահությամբ «ապացուցում էր», որ «երկու տառիս» արտահայտությամբ պետք է հասկանալ Դատաստանագրքի «Ա խմբագրությունը», որովհետև իբր այս խմբագրությունը բաղկացած էր «երկու տառից», այսինքն՝ երկու մասից։ «Դատաստանագիր-

22 «Բանբեր Մատենադարանի», № 6, էջ 63։
23 Նույն տեղում, էջ 68։
24 «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 4, էջ 153։
25 Նույն տեղում, էջ 154։

քը,— գրում է նա,— իր սկզբնական խմբագրության ձևով իրոք երկու մասից էր կազմված՝ նախադրություն և բուն Դատաստանագիրք՝ առանց մասերի»[26]։ Երկրորդ հոդվածում Ա խմբագրությունը դարձնելով այլևս «մասերի բաժանում չունեցող» Դատաստանագիրք, նա գրում է. «Երկու տառի տակ» այստեղ կարելի է հասկանալ Բ խմբագրության Դատաստանագրքի երկու մասերը»[27]։ Այստեղ ուշագրավ է ոչ միայն սեփական տեսակետի հերքումը, այլև զարմանալի մոռացկոտությունը։ Խոսրով Թորոսյանը երկրորդ հոդվածը գրելիս չի հիշել, որ առաջին հոդվածում արդեն ինքը Դատաստանագրքի Ա խմբագրությունը բաժանել էր երկու մասի և դրանով էր հիմնավորել «երկու տառիս» վրիպակը, ուրեմն այլևս կարիք չկար մի նոր հոդվածում Ա խմբագրությունը դարձնել «մասեր չունեցող Դատաստանագիրք» և Դատաստանագիրքը նորից բաժանել երկու մասի, որպեսզի այս անգամ դարձյալ նույն բանն «ապացուցի»։

Մեզ այնպես է թվում, որ Թորոսյանը պարզապես մեր շարադրած փաստերի լույսի տակ համոզվել է «երկու տառիս»-ի վրիպակ լինելու մեջ, բայց չի ցանկացել դա հրապարակորեն ընդունել և առաջ է քաշել Բ խմբագրության երկու մասերի բաժանված լինելու հանգամանքը, մոռանալով, որ դրանով դրությունը չի փոխվում, որովհետև երկու մասը մնում է երկու մաս, անկախ այն բանից, թե այդ մասերի բաժանումը Ա խմբագրությանն է վերագրվում, թե՝ Բ խմբագրությանը։

Այսպիսով, «երկու մասի» և «երկու տառի» դեմ մեր նախորդ հոդվածում բերված բոլոր փաստերը շարունակում են մնալ իրենց ուժի մեջ։ Դեռ ավելին. «Բ խմբագրության» դեպքում նրանք ավելի մեծ ուժ են ստանում, որովհետև այս անգամ «Ա խմբագրության» առաջին մասի՝ Նախադրության վրա ավելանում են նաև Բ խմբագրության մյուս երկու մասերը (եկեղեցական և աշխարհական մասերը), որով Դատաստանագիրքը վերստանում է իր իրական տեսքը և բաղկանալով երեք մասից՝ վերջնականապես ձերբազատվում է «երկու տառ»-ի առասպելից։

Եզրակացություն։ «Թե՛ բանասիրորեն, և թե՛ տրամաբանորեն», մանավանդ նաև՝ իրական-ձեռագրական փաստերի հիման վրա ապացուցվում է, որ «ընթերցման Բ տառիս»-ը պատահական մի վրիպակ է, որի վրա Թորոսյանը կառուցել է մի ամբողջ տեսություն և որից հետևողականորեն չի հրաժարվել իր երկրորդ հոդվածում։

Դատաստանագրքի հնագույն ձեռագրերը (Մխիթար Գոշի ինքնագիրը համարված Վենետիկի ձեռագիրը և Գոշի ինքնագիր օրինակից անմիջապես ընդօրինակված Զմմառի ձեռագիրը), ինչպես նաև մեզ հասած ավելի քան տասը այլ ձեռագրեր, որոնց թվում նաև «երկու մասից» բաղկացած Դատաստանագրքի երեք ձեռագրեր, զերծ են «երկու տառիս» վրիպակից։ Այս ձեռագրերի հիման վրա պետք է Դատաստանագրքի ապագա հրատարակություններում վերականգնել Մխիթար Գոշի ճիշտ արտահայտությունը՝ «պատահելք ընթերցմամբ տառիս» և վերացնել վրիպակի վրա կառուցված թյուրիմացությունը։

26 «Բաներ Մատենադարանի», N 6, էջ 62։
27 «Պատմա-բանասիրական հանդես», 1964, N 4, էջ 154։

ВЫРАЖЕНИЕ «ՊԱՏԱՀԵԼՔ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՏԱՌԻՍ» ПАМЯТНОЙ ЗАПИСИ (1184 г.) МХИТАРА ГОША

Г. В. АБГАРЯН

(Резюме)

Выражение «*Պատահելք ընթերցմամբ տառիս*» («те, которым встретится при чтении эта книга») в некоторых рукописях «Судебника» Мхитара Гоша искажено следующим образом: «*Պատահելք ընթերցման սի տառիս*» («те, которым встретятся при чтении эти две книги»). Искаженный текст вызвал в научной литературе к жизни теорию о существовании двух томов «Судебника».

В настоящей статье на основании более древних рукописей восстанавливается первоначальный текст искаженного выражения и показывается несостоятельность выдвинутой теории.